ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 259-Ա

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՌՆԻԿ ԽԱՉԻԿԻ ՍԻՍԱԿՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 0,8 ՀԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1260 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 466-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Գառնիկ Սիսակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Լուծել 16 նոյեմբերի 2007 թվականին Արենի գյուղապետարանի և քաղաքացի Գառնիկ Խաչիկի Սիսակյանի միջև կնքված Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,8հա մակերեսով անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը (վկայական 0087760):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**